



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

19 մայիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի  
Մ. Թովուզյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Մասիս Խաչատրյանի անհատական  
դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համա-  
ձայն՝ քաղաքացի Մասիս Խաչատրյանը 30.04.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական  
դատարան՝ խնդրելով՝ «որոշել «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի  
և դրանով ձեւավորված իրավակիրառ պրակտիկական ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 14,  
14.1, 19, 30.1, 42, 43, 44 և 47-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության  
հարցը»:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթն իր անորոշությամբ առաջացնում է  
տարաբնույթ մեկնաբանություններ և ձեւավորում դրանց համահունչ իրավակիրառ  
պրակտիկա, ինչն էլ հակասություն է առաջացնում Սահմանադրության, Մարդու  
իրավունքների համընդհանուր հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական  
իրավունքների մասին միջազգային դաշնագրի և «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ  
օրենքի պահանջների միջև:

Դիմողը նշում է, որ երեխայի ծնողներից մեկի կողմից ՀՀ քաղաքացիություն  
ընդունելու դեպքում ՀՀ-ում փաստացի չի կիրառվում «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ

օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, դրա փոխարեն իմպերատիվ կերպով կիրառվում է միայն նշյալ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերությունը:

Դատական կազմը, ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ գտնում է, որ սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

**1. «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերությունների վերաբերյալ**

Վիճարկվող՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը բաղկացած է չորս պարբերությունից, սակայն դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ պարբերությունները դատարանների կողմից չեն կիրառվել դիմողի նկատմամբ: Եվ ՀՀ վարչական դատարանի, եւ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ խնդրո առարկա գործի կապակցությամբ ընդունված դատական ակտերում հղում է կատարված «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերությանը, որեւէ հիշատակում նշյալ դրույթների մյուս պարբերությունների առնչությամբ բացակայում է: Դատական ակտերի ընդհանուր բովանդակությունից նաեւ բխում է, որ դրանք կառուցված են բացառապես «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության տրամաբանության հիման վրա:

Հարկ է նշել, որ սահմանադրական արդարադատություն հայցող անձը կարող է օգտվել իր՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքից միայն այն դեպքում, երբ դատարանների կողմից կայացված դատական ակտով նրա նկատմամբ կիրառված օրենքի դրույթով խախտվել է սահմանադրական որեւէ իրավունք, ինչն էլ, որպես իմպերատիվ պահանջ, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 աշխատակարգային որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Հետեւաբար, այս առումով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

**2. «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության վերաբերյալ**

ա/ սույն դրույթի համաձայն՝ ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերած ծնողների երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Դիմողի իրավական փաստարկները՝ ուղղված «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորմանը, հիմնականում վերաբերում են նշյալ հոդվածի 2-րդ պարբերությանը: Մասնավորապես, դիմողը նշում է, որ

«...իրավակիրառական պրակտիկայում վարչական մարմիններն ինքնուրույն են որոշում երեխայի քաղաքացիությունը, առանց հաշվի առնելու երեխայի՝ ՀՀ քաղաքացիություն ընդունած ծնողի գրավոր համաձայնությունը, կամ, ...կարծես «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը բաղկացած է միայն 1-ին պարբերությունից եւ այլն»: Դիմողի մյուս փաստարկները եւս՝ իրավական անորոշությանը, համաչափության սկզբունքին, իրավահավասարության սկզբունքի խախտմանը վերաբերող, ուղղված են «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ պարբերությունների հիմնավորմանը: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 24.11.2009թ. ՄԴՈ-839 որոշման մեջ ձեւավորել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 24.11.2009թ. ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

բ/ միաժամանակ, դատական կազմը գտնում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Քաղաքացի Մասիս Խաչատուրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող**

**Անդամներ**

19 մայիսի 2014 թվականի  
ՍԴԴԿՈ/1-7